ՀԱԿՈԲ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՆՁԻ ՍԵՌԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Անձի սոցիալականացման գործոնների ընդհանուր համակարգում իր կարևոր տեղն ու դերն ունի սեռական սոցիալականացումը, որը անքակտելիորեն փոխկապակցված է սեռական դաստիարակության հետ, մի հիմնահարց, որ կարիք է զգում գիտամանկավարժական ուսումնասիրության:

Սոցիալականացում ասելով հասկանում ենք անձի ձևավորման, զարգացման համակողմանի գործընթաց, որ նշանակում է անձի մուտքը սոցիալական միջավայր, նրա հարմարվողականությունը (ադապտացիան), սոցիալական փորձի յուրացում և սոցիալական որոշակի գործառույթների (ֆունկցիաների) կատարում: Ամեն մի սերնդի ժառանգորդումը անցյալից իր կյանքը սկսում է ընդհանուր սոցիալական միջավայրում, որն ստեղծել են նախնիները: Հանրային և անձնական գործունեությամբ զբաղվելով, անձը իր մեջ զարգացնում է այն յուրահատուկ ընդունակությունները (որոնք նրա մեջ ժառանգորդաբար փոխանցվում է), որոնք դրսևորվում են նրա ընդհանուր վարքի, ապրելակերպի, հասարակական հարաբերությունների, դերային կարգավիճակի և այլնի մեջ: Այդ նույն գործընթացը տեղի է ունենում նաև անձի ճանաչողական զարգացման, նրա ուսումնա-գիտական գործընթացում, գիտելիքների յուրացման, կրթության և դաստիարակության գործընթացում:

Գիտության մեջ առկա են մի շարք փուլերի բնորոշումներ, որ անցնում է անձը սոցիալականացման գործընթացում: Չնայած տարբեր մոտեցումներին այնուհանդերձ, սոցիալականացման ընդհանուր գործընթացը պատկերացվում է ընդհանուր սանռոանայիհ մոտեցումներով կապված անձի տարիքային զարգացման փուլերի, շրջանների հետ: Սոցիալականացման այդ փուլերից են մանկան, դեռահասի, պատանու, չափահասի սոցիալականացում. ընդ որում յուրաքանչյուր անցման փուլում ակնառու է դրսևորվում ընտանեկան, ուսումնակրթական, հասակակիցների, սոցիալական միջավայրի ազդեցությունը, դրանց ներգործությունը դիտարկելով որպես հաստատուն ազդեցություններ

կապված տվյալ տարածաշրջանի, աշխարհագրական միջավայրի, ազգային հոգեբանության, մշակույթի և անհատական կառուցվածքի և այլնի հետ:

Ընդհանուր տիպականությամբ սոցիալականացումը իր ակունքը, սկիզբը ստանում է ընտանիքում: Ընտանիքն է այն սկզբնական տեղը, օջախը, օրրանը, որտեղ սկզբնավորվում, ձևավորվում և սկսվում է սոցիալականացման գործընթացը: Պրոֆեսոր Ի.Պ.Պոդլասնին իրավացիորեն գրում է. «Անձի կենսական դիրքորոշման ձևավորմանը նպաստող սոցիալական գործոնների համակարգում առաջին տեղը պատկանում է ընտանիքին (ընդգծումը մերն է՝ Հ.Գ.):[1] Ընտանիքը որպես մարդկության միկրո օրրան այն նախնական բջիջն է, որը էապես ներազդում է անձի սոցիալականացման վրա. ընտանիքում է, որ տեղի է ունենում արժեքաբանական կողմնորոշում և վարքի նորմերի փոխանցում ու յուրացում: Ընտանիքն է, որ արտացոլում է տվյալ տոհմի, ցեղի, ազգի սոցիալական վարքը, հոգեբանությունը, բարոյականությունը, լինելիությունը: Մարդկության պատմության ընթացքում յուրաքանչյուր ազգ կերտել է իր սեփական, միայն իրեն յուրահատուկ, բնորոշ ընտանեկան հարաբերությունների տեսակ, նիստուկաց, սովորույթ, որոնք աստիճանաբար սերնդե-սերունդ փոխանցվելով վերածել են ավանդույթի: Հայոց ազգը իր բազմադարյա պատմության ընթացքում, հազարամյակների ծալքերում կերտել է իր ազգային դիմագիծը, մշակույթը, հոգեբանությունը, որոնք հատկանշական են և պահպանվել, ամրապնդվել և շարունակում են զարգանալ մեր օրերում:

Ինչպես վերը նշեցինք, ընդհանուր սոցիալականացման գործընթացում իր ուրույն տեղն ու դերն ունի սեռական սոցիալականացումը, որի վերաբերյալ կուզենայինք ներկայացնել մեր նկատառումները: Սեռական սոցիալականացումը ձևավորվում է անձի զարգացման մանկության շրջանում, այն կազմում է համընդհանուր դաստիարակության անհրաժեշտ և կարևոր բաղադրամաս, որը իր հետագա բնականոն գործընթացն է ունենում անձի սեռային պատկանելիության տարբեր փուլերում՝ ընդհուպ մինչև հասունություն, կյանք մուտք գործելը, ընտանիք կազմելը: Անձի սեռական սոցիալականացման գործընթացում տեղի են ունենում կենսաբանական, սոցիալական, հոգեբանական, բարոյական, իրավական, ձևաբանական, կազմաբանական որակական փոփոխություններ, որոնք լայն հանրագումարային, համալիր վարքասոցիալական բնութագրեր են ներառում: Առանձնապես կարևորվում են հակառակ սեռերի սեռական սոցիալականացման տարբերությունների ուսումնասիրության յուրահատկությունները, որոնց նկատմամբ կան ինչպես ավանդական, այնպես էլ

[1] Подласный И.П. Педагогика. М., 1996, с. 595.

տարբերակված ու համընդհանուր մոտեցումներ: Այդ մոտեցումներում տիպավորվում են սեռական սոցիալականացման գործընթացում ժառանգական գործոնի, անձի կենսաբանաժառանգական, ֆիզիոլոգիական հատկանիշները, ինչպիսիք են ծնողների արյան խմբի կրումը որպես ժառանգական հատկանիշներից մեկը, արյունաբանական, հյուսվածքաբանական, բնավորության գծեր, արտաքին նմանություն (մարմնի կառուցվածքի, աչքերի և այլն), որոնք սոցիալ պատմական գործոններ են, որոնցով պայմանավորվում են տվյալ տոհիմացեղային, ազգակցական կապերը:

Սեռական սոցիալականացումը իգական և արական սեռերի մեջ նախնական շրջանում ունենում է ընդհանրաբար արտաքին նկարագրականով իդենտային (նույնական) հատկանիշներ. սակայն նեղ մասնագիտական գրականության մեջ, կոնկրետ գիտական ուսումնասիրությունները նոր տվյալներ են ներկայացնում, որ նրա արտաքին նույնական, հատկանիշները չեն կարող արտահայտել անձի վաղ մանկության շրջանում ընթացող ներհոգեական և ճանաչողական-իմացական կողմնորոշումը, զարգացման տարբերակվածությունը: Սեռական սոցիալականացման բնորոշման հարցում հատուկ մոտեցման խնդիր է ծագում սեռային դերերի, արական և իգական սեռերի գնահատման, արժեքավորման մոտեցումները, դրանց կոնկրետ առարկայական, մասնավորաբար, բժշկակենսաբանական և սոցիալ-հոգեբանական ուղղվածությունը: Ասվածը վերաբերում է հատկապես ապագայում սեռերի սեռային և սոցիալական դերերի, նրանց հասարակական և անհատական արժեքավորման, դերային կարգավիճակների գնահատման գործառույթին, այդ թվում նաև աշխատանքի ստեղծագործական, սննդի ձեռքբերման, մարդկային հասարակության տարբեր ոլորտներում ենթադրվող տեղի և դերի հեռանկարը: Սեռական սոցիալականացման կարևոր հատկանիշներից են նաև ազգային սովորութային, ազգային ավանդական, հոգեբանական ազդեցությունները, ծնողական հոգածությունը երեխաների նկատմամբ, նրանց խնամքի, դաստիարակության և պաշտպանության խնդիրներում: Կարևոր է իմանալ, թե պատմական ինչպիսի միջավայրում, պայմաններում է ընթանում սեռական սոցիալականացումը, ինչ կարգավիճակում է տվյալ ընտանիքը, որտեղ է տեղի ունենում, ընթանում անձի սեռական սոցիալականացումը:

Այս հիմնախնդրի մեջ էապես կարևոր է պարզել քաղաքաբնակ, թե գյուղաբնակ է սոցիալականացվող անձը, ինչպիսի տեղեկատվական դաշտում, միջավայրում, հետևաբար կարևորվում է նաև ինչպես միկրո այնպես և մակրո սոցիալական միջավայրի գնահատումը: Անձի սեռական սոցիալականացման գործընթացի վրա իր ակտիվ ներգործությունն է ունենում սոցիալ-մշակութային,

սովորութային, ծնողների զբաղվածության, նախադպրոցական հիմնարկների առկայության, հանրակրթական և բուհական, գիտական և արտադրական, էկոլոգիական և այլ գործոնների առկայությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սեռական սոցիալականացման գործընթացի վրա իր ազդեցությունն են ունենում կենսոլորտի աղտոտվածությունը, տվյալ տարածաշրջանում բժշկական համապատասխան կանխարգելող, հիգիենիկ լուսավորչական միջոցառումների անցկացումը, լրիվ, ոչ լրիվ, մեծ և փոքր ընտանիքները. ուստի անձի սեռական սոցիալականացման նկատմամբ ուսումնասիրություններ և բնութագրումներ կատարելիս անհրաժեշտորեն խնդիր, պահանջ է առաջանում տարբերակված, շերտավորված մոտեցման, հաշվի առնելով վերոհիշյալ գործոնների փոխկապակցությունները: Այդ գործոնները միաժամանակյա գործառույթային դաստիարակչական ազդեցություն են ունենում երկու սեռերի սեռական սոցիալականացման գործընթացի վրա: Սեռական սոցիալականացման գործընթացի վրա իր ազդեցությունն է ունենում նաև արական և իգական սեռերի նկատմամբ ընտանեկան, բակային, թաղային, բնակավայրային, ազգային հոգեբանական, վարքասովորութային, կենցաղային գործոնները, որոնք իրենք են պայմանականորեն նորմերի ձևով թելադրում անձի ինչպիսին լինելը: Օրինակ, այդ նորմերով է պայմանավորվում այն, որ իգական սեռը պետք է լինի որպես բնությունից ի սկզբանե թույլ, ընտանիքի մայր, երեխա ծնող ու խնամող, ամուսնուն ենթարկվող և այլն: Կամ արական սեռին բնորոշ է, որ նա ընտանիքի ծուխը, օջախը, շավիղը շարունակողը, իրավահաջորդն է, հայրական տունը շենացնողն է և այլն: Սա մասնավորաբար վերաբերվում է հայոց ազգային վարքասովորույթային հոգեբանության և հայրական ազգանվանը: Մինչդեռ կան ժողովուրդներ, ազգեր, որոնց մոտ ծնված երեխան (հաջորդ սերունդը) կրում է ազգությունը, իրավահաջորդի անձնագրումը մայրական կողմից, որը նշում է մայրիշխանության դերի գերակայությունը: Այդպիսի ազգերից կարելի է նշել հրեաներին, ավստրալոիդներին, նեպալցիներին և այլն: Այսպիսով, սկզբունքորեն մեկ ընդհանուր գործընթացի վերաբերյալ քննարկում կարատելիս ուսումնասիրողը, հետազոտողը առնչվում է պարադոկսալ և հակասական երևույթների, որոնք իրենց յուրահատկություններն ունեն, և ուսումնասիրվող օբյեկտի նկատմամբ առանձին տարբերակված մոտեցում է պահանջում:

Սեռական զարգացման և անձի սոցիալականացման գործընթացը նաև իր նրբությունները և յուրահատկություններն է վերցնում ընտանիքի ժամանակակից ժողովրդավարական թե ավանդապահ լինելու, ընտանիքը ինչպիսի ժառանգորդում է պահպանում, պահպանողական է նրա սովորութային,

կենցաղավարական և պահպանողական է արդյոք, ավանդապահ է արդյոք, թե ժամանակակից, թե ընտանիքի անդամները իրավահավասարության արդիական փոխհարաբերություններով են միմյանց դերային արտահայտվածություն ներկայացնում: Հայտնի է, որ կնոջ նկատմամբ ունեցած վերաբերմունքի արևմտաեվրոպական չափանիշները ոչ բոլոր հայ ընտանիքների կողմից է ընդունելի: Ավանդապահ ազգերը քննադատորեն և նույնիսկ հեգնորեն են վերաբերվում եվրոպական պատկերացումներին, որտեղ կնոջ դերը բարձրացվում է, իրավահավասար է արական սեռին, որ իբր արևմուտքի երկրները կառավարվում են, ղեկավարվում են կանանց կողմից, Օրինակ, Մեծ Բրիտանիայի պետության խորհրդանիշը թագուհին է, իգական սեռը կարող է ընտրվել և ղեկավարել եվրոպական պետության կառավարությունը, կինը կարող է լինել խոշոր արտադրական կամ գիտական կենտրոնի ղեկավար և այլն: Եվրոպական երկրները քննադատում են ավանդապահ արևելքին, որտեղ ձևականորեն է համարվում սահմանադրորեն սեռերի իրավահավասարությունը, մինչդեռ գործնականում կինը բազմապատիկ անգամ զիջում է արական սեռին օրինակ, պատասխանատու պաշտոններ, ղեկավար դերեր, պետական, տնտեսական, քաղաքական և այլ կառույցներում կնոջը ղեկավար պաշտոններ չստանձնելը, այդ թվում նաև ՀՀ ազգային ժողովում կին պատգամավորների սակավաթիվ լինելու փաստը: Այս երևույթը ունի իր պատմական բացատրությունը, քանի որ հայոց ընտանիքը իր վաղ պատմական անցյալում գերակշիռ նշանակություն, դեր, տեղ հատկացրել է արական սեռին, որպես հայրենիքի զինվոր, պաշտպան, որպես արտադրող, կերակրող, որպես սերնդի հայր: Այդ նկատառումով դաստիարակչական գործընթացում հայոց պատմական անցյալում, միջնադարում և ներկայումս էլ տղա երեխան առանձին բերկրանքով և նշանակությամբ է խորհրդանշվում՝ որպես ընտանիքի, ազգի, տոհմի, ցեղի խորհրդանիշ: Տղա երեխան ավելի արագ արտաքին միջավայր է դուրս եկել, ճանապարհորդել, ուսում ստացել, գիտությամբ զբաղվել, մինչդեռ աղջիկ երեխան հիմնականում առավելաբար տնային միջավայրում է դաստիարակվել:

Ամուսնալուծությունները մեծամասամբ տեղի են ունեցել, և այսօր էլ այդ փաստերը արձանագրվում են հարսի նկատմամբ սկեսրոջ դժգոհության պատճառով: Այս սովորույթը մինչև օրս պահպանված է, որը ամոթանքների, ընդհուպ մինչև խնամիներին, ազգականներին պարսավելու, վատաբանելու առիթ է տալիս, որպես անհնազանդ և անկիրթ տոհմ, ցեղ, ընտանիք, որոնցից աղջիկ ուզելը կասկածի տակ է դրվել:

Այսօր Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը օրենսդրորեն երաշխավորում է կանանց և տղամարդկանց իրավահավասարու-

թյունը: Իրավահավասարություն սոցիալական, աշխատանքային, մշակութային, կրթության և այլ ոլորտներում, սակայն ընտանիքի ավանդապահ համակարգը և ազգային հոգեբանության մեջ ամրագրված սովորույթը, որ դարերով արմատավորվել է հայոց ազգի կենցաղում և հոգեբանության մեջ մնում է որպես առավել բարձր հատկանիշ:*

Սեռական սոցիալականացման անհրաժեշտ բաղադրատարրերից են իգական և արական սեռերի սեռական զարգացման գործընթացում վարքի կանոնների դաստիարակումը վաղ մանկության շրջանում: Նախնական սոցիալականացման գործընթացը պահանջում է երեխայի նկատմամբ ազատ, անսահմանափակ հնարավորություններ ընձեռել, խաղի, հանգստի, ինքնագործունեության և անկաշկանդ զարգացման պայմաններ ստեղծել: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ երեխայի ազատ, անկաշկանդ առանց սահմանափակումների, առանց արգելված հոգեմարմնական պատիժների զարգացման գործընթացը նրան դարձնում է առավել բարյացակամ: Նա հարմարվում է առկա պայմաններին, հնարավորություն ունենում առանց բացասական, հոգեբանական արգելքների իր «Ես»-ը ձևավորելու և զարգացնելու: Ծնողական պատասխանատվությունը միայն հսկումն է, առանց միջամտելու, որպեսզի փոքրիկը ինքնուրույն կարողանա կողմնորոշվել և խաղային գործունեությունը կազմակերպել, ֆիզիկապես բնականոն զարգանալ: Այդօրինակ միջոցառումներից ուշագրավ երևույթ է Երևանի «Կանաչ տունը», որը յուրատեսակ դրախտ է փոքրիկների համար, ինչ ուզում են, որքան ուզում են, խաղում են, զվարճանում, որովհետև բացակայում են «Մի արա» դիտողությունները, մարմնական պատիժներն ու արգելքները:

Սեռական սոցիալականացման գործընթացում իր կարևոր դերն ու նշանակությունն ունեն բժշկահիգիենիկ խորհրդատվությունները, ծնողների բժշկագիտական գիտելիքների իմացությունը, իրազեկությունը, որոնք հնարավորություն կտան առանց խուճապի, տագնապի փոքրիկների զարգացման գործընթացը հսկել՝ առանց ավելորդ միջամտությունների և պատիժների:

Ուսումնասիրությունները և հետազոտությունները տվյալներ են ներկայացնում, որ մարմնական պատիժը, հոգեբանական արգելքները (նկատողություն, դիտողություն, խոժոր հայացք և այլն), երեխայի վրա թողնում են բացասական հուզական ազդեցություն, նրա հոգեֆիզիոլոգիական զարգացու-

---

*Այս մասին առավել մանրամասն տե՛ս նաև Ա.Նալչաջյանի և Ս.Մկրտչյանի «Էթնիկական մանկավարժություն» աշխատությունը:

մը արգելակում, որը արտահայտվում է՝ կամ փոքրիկի խոր հոգոց հանելով, կամ լացը որպես բողոքի ինքնապաշտպանության վահան, սննդից հրաժարվելը, պատիժ կիրառող ծնողի նկատմամբ սառնություն ցուցաբերելը և այլ դրսևորումներ, որոնք բացասական ազդեցություն են ունենում նաև նրա սոցիալականացման գործընթացի վրա:

Բժշկագիտության պատմությունը ցույց է տալիս, որ մարդու առողջության առաջին երաշխիքը նրա հոգեկան նուրբ, բարեկամական վերաբերմունքով է պայմանավորված: Այս իմաստով է բժշկագիտության առաջին խորհրդանիշը, որ կոչվում է <u>խոսք,</u> կամ ներկայումս հայտնի է պսիխոթերապիա - (խոսքաբուժություն) հոգեներշնչանքով, փաղաքուշ բարեկամական հայացքով, քնքշալի շշուկով, հաճելի արտահայտությամբ դրական լիցքեր են հադորդում, որը վերլուծիչների միջոցով փոխանցվում է ներհոգեկան աշխարհ և նպաստավոր դաշտ ստեղծում՝ օգնելով զարգացող էակի ընդհանուր հոգեֆիզիոլոգիական հասունացման գործընթացին:

Սեռական սոցիալականացման գործընթացի համար ազդեցիկ դեր և նշանակություն ունի այն, թե երեխան որ սեռի ենթակայության տակ է գտնվում, արդյո՞ք նա իգական սեռի դաստիարակության, խնամքի և իշխանության ներքո է, թե՞ արական:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդպիսի տարբերակումը բերում է արական սեռի կարգավճակի և ազդեցություն գերագնահատման: Եթե արական սեռի միջավայրում է երեխայի սոցիալականացումը ընթանում, նա ավելի առնական, ինքնավստահ, համարձակ է, որը ամրագրվում է կյանքի հետագա տարիներին (էլ ավելի է առնականանում): Այդպիսի երեխան իշխանատենչ, կարգադրող, հրամայական տոն ու երանգ է գործածում իր խոսելաոճում և ընկերների հետ հարաբերություններում:

Մինչդեռ ի հակառակ նշվածին, կանացի - իգական միջավայրում հասունացող երեխան առավելաբար ընկալում, յուրացնում և վերարտադրում է կանացի հատկանիշներ, նմանակելով իր վրա ունեցած կանացի ազդեցությանը, որը աստիճանաբար ավելի բարդույթային հոգեբանական, հանրագումարային է դառնում կյանքի զարգացման պուբերտացիոն (ճգնաժամային) փուլերում: Այդպիսի սոցիալականացման գործընթաց անցնող աղջիկը, մեծապես կախված է լինում մորից, առավելաբար իր խոհերը, մտածումները, խնդիրները քննարկում է գանգատի կարգով, ակնկալելով մայրական շոյանք և պաշտպանություն: Այս հարցում հարկ է նկատել, որ իր վառ արտահայտած ներգործությունն ունի մասնավորաբար իգական սեռի (մոր, տատի, քրոջ հետ) միևնույն անկողնում քնող և հասունացող երեխայի վարքը: Սովորաբար

հայտնի է, որ երեխաները առավելաբար քնում են մոր հետ միասին, քան հոր հետ: Այս խնդրի նկատմամբ ոչ ուշադիր, ոչ լուրջ վերաբերմունք ցուցաբերելով (ինչպես բժշկական, սոցիոլոգիական, հոգեբանական, մանկավարժական գիտությունների կողմից) աչքաթող է արվել այն, որ պետք է խստագույնս պահպանել երեխայի սոցիալական հիգիենան, նրա սոցիալականացման, մասնավորաբար սեռական սոցիալականացման գործընթացի կարևորումը՝ որը սկսած ծնված օրից, շրջանից, ընդհուպ մինչև ինքնուրույն կյանք մտնելը:

Ներկայումս աշխարհի տնտեսապես զարգացած երկրներում հրատարակվում են տարիքային տարբեր փուլերի համապատասխան մանկական դիտարաններ, հանրագիտարաններ, խաղալիքների հատուկ տեսակներ, մանկական կինոֆիլմեր, որոնք նպաստում են նաև երեխաների սեռական սոցիալականացմանն ու դաստիարակությանը: Այդպիսի հանրագիտարաններից կարելի է նշել, օրինակ, «Սեռական կյանքի հանրագիտարանը», որը 90-ական թվականներին ֆրանսերենից թարգմանվեց ռուսերեն, սակայն հայերենով նմանօրինակ ընդհանուր ճանաչողական գրականություն սակավաթիվ է, որի անհրաժեշտությունը խիստ զգացվում է: Նկատենք, որ նույնիսկ հռոմեական կաթոլիկ եկեղեցին՝ Վատիկանը նույնպես երեխաների տարբեր տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով հրատարակում է պատկարազարդ հանդեսներ, դիտատեսողական և ճանաչողական նյութեր սեռական դաստիարակության վերաբերյալ: Սակայն Հայաստանյան առաքելական եկեղեցին չի հրատարակում, փոխարենը տարբեր աղանդավորական միավորումներ իրենք են լրացնում այդ բացը, խեղաթյուրերով երեխաների հոգևոր աշխարհը: Սեռական սոցիալականացման և դաստիարակության գործընթացում կարևոր ազդեցություն և նշանակություն ունի ընտանիքի բարոյական մթնոլորտը: Օրինակ, հայտնի է, որ կան զգալի թվով փաստեր, տվյալներ, որ <u>անհաշտ</u> ծնողների երեխաները իրենց սոցիալականացման գործընթացում կողմնորոշվում են մերձավոր ազգականների՝ տատի կամ պապի, կամ այլ հարազատների չափանիշներով, պատկերով, խառնվածքով: Եթե սկզբնապես նախնական սոցիալականացման գործընթացի բաղադրատարրերը հասունացող սերնդին փոխանցվում են կենսաժառանգական գծերով, ապա սոցիալականացման հաջորդ փուլերը ընթանում և ի վերջո կաղապարվում դաստիարակության ազդեցությամբ, միջավայրի, շփման,փոխհարաբերությունների ընթացքում: Անձի հոգեֆիզիոլոգիական զարգացման գործընթացի, վարքի սոցիալականացման տարբեր աստիճաններն ու մակարդակները իրենց հետ ծնունդ են առնում, ձևավորում խնդիրներ, որոնք առաջանում են հատկապես սեռական հասունության նախնական փուլում, այն ժամանակ, երբ տեղի է ունենում

սեռական հորմոնների արտադրություն, երբ մարմնի կառուցվածքը արագորեն փոփոխվում է, այսինքն անձը կենսաբանահոգեբանական և սոցիալ-բարոյական աճի արագ ընթացք է ստանում:*

Վերը ներկայացված նկատառումներն ու դիտարկումները հաշվի առնելով պետք է առավելագույն զգուշություն, աչալրջություն, նպատակասլացություն, հեռագնա նպատակներ ունենալ սեռային տարբերությունների բնույթի, սեռական սոցիալականացման, կենսաբանական, հոգեբանական, բարոյական և բժշկագիտական հետևանքների մասին: Ծնողը, դաստիարակը անհրաժեշտորեն պետք է պատրաստ լինի իրեն վստահված սերնդի սեռական դաստիարակության գործընթացը պատվախնդրորեն, պատասխանատվությամբ կենսագործելու, քանի որ յուրաքանչյուր նորածին կարիք ունի ինչպես մարմնական- ֆիզիկական, այնպես էլ բարոյահոգեբանական լիարժեք ուշադրության, հոգածության և դաստիարակության: Այդ գործընթացի կարևոր բաղադրատարրերից է նաև անձի սեռական սոցիալականացումը, որը հանդիսանում է դաստիարակության ընդհանուր համակարգի կարևոր ոլորտներից մեկը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Ընտանեկան կյանքի բարոյագիտություն և հոգեբանություն, Եր., 1986:
2.Խրիպկովա Ա.Գ., Կոլեսով Դ.Վ., Տղա-դեռահաս-պատանի, Եր., 1982:
3.Խրիխկովա Ա.Գ., Կոլեսով Դ.Վ., Աղջնակ-դեռահաս-աղջիկ, Եր., 1982:
4.Նալչաջյան Ա.Ա., Սոցիալական հոգեբանություն, Եր., 2004:
5.Ананьев Б.Г. - Человек как предмет познания. М.: 1998,
6.Паллади Г.А., Штемберг М.И. 3 Гигиена брака. Кишинев. 1987.
7.Подлосный И.П. — М.: Педагогика, 1996.
8.Социальная работа (теория и практика), ЕГУ, 1995.
9.Фрейд З. — Психология сессуальности, М.: Хозрасчетное объединение "Поликолог-интограф", 1975.
10.Юнда И.Ф., Юнда Л.И. — Социально-психологические и медико-биологические лсновы семейной жизни. Киев. 1990.

* Այս մասին ավելի մանրամասը տես նաև Զ.Ֆրեյդի «Психология сексуальности» աշխատությունը: